

Հռոմէականները դանուխն՝ Աւստրիոյ Հայոց ընդհանուր թիւը կը լինի 15000, որոնցմէ մի- միայն մօտաւորապէս 500-ը Հայաստ. Առաքել. եկեղեցւոյ հօտին կը պատկանին:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԵԺԻՆ

ՉԼՆՁՐՈՒԹԻՒՆ

(Wilhelm Münch)

Այս երբէք չեմ ձանձրանում, շատ անգամ լսում ենք մեր ծանօթներից, Այս խօսքը անշուշտ գեղեցիկ ապացոյց է, թէ նոցա ներքին կեանքը հարուստ և բեղմնաւոր է: Նոցա հոգեկան աշխուժութիւնը անսպառ է, թէ նոցա ստանում են և իրանց վերայ ազդում է տալանտութիւնների առատութիւնը, թէ ընդունակ են նոյն իսկ ամենաշնչին և նուազագոյն զրդիչներից անգամ անանուիլ և զգաստանալ, և թէ առհասարակ օժտուած են ուրիշ շատ այսպիսի լաւ յատկութիւններով: Բայց այդ կարող է լինել նաև մի բոլորակա՛ն ինքնամոլորութիւն՝ փոքր ինչ անախտութեամբ համեմուած: Վասն զի, եթէ և մարդ կարողանայ այնքան վարժուիլ, որ ինքն իրանից ամենևին չձանձրանայ, հապա՛ որքան դժուար բան է, որ օտար մարդկանց կամ զբոսի իրերի պատճառով ծագած ձանձրութիւններից՝ զերծ և ապահով մնայ: Թող այդպիսիներից մէկը անձրեային օրը երկու բոլորով ուշ հանին երկաթուղու մի յետ ընկած կայարանը, և ապա մինչև հետեւեալ գնացքը՝ չորս ամբողջ ժամ այդպիսի անապատ, ամայի, նեղ սրահի մէջ բանտարկուած մնալու դատապարտուի: անշուք դատարկ պատերին նայելով, առանց ընթերցանութեան, առանց խօսակցի, առանց ճաշարանի, ուր գէթ ծնօտները շարժեցնելով կարողանար ժամանակը յաղթել, թող որ փոքր ինչ քաղաքակիրթ մարդը մի այսպիսի վիճակի մէջ ընկնի, և թէպէտ անարգել միշտ ազատութիւն կունենայ աշխարհքի մեծամեծ իմաստութիւններ հնարելու իւր մօքի մէջ կամ մի երկար ոտանաւոր շարադրելու զլիսի մէջ կամ դէժ կենաց բոլոր յիշատակները իւր առաջ կենդանացնելու կամ ապագայի ամենաընդարձակ ծրարագիծներ թխելու, — սակայն նա չի կարողանայ ուրանալ, որ բազմիցս անտանելի շեղութիւն, թոյն

և յուսահատութիւն թափելով հանդերձ՝ այնուամենայնիւ ձանձրութիւն կրեց, որքան էլ ձանձրանալուցիքնէ ապահոված էր և այդ հրէշին տապալելու հնարներ ունէր: Մի խօսքով, եթէ ոչ մենք ինքներս և ոչ ուրիշները նեղը լինն մեզ, շատ անգամ հանգամանքների որոգայթները այդչափ ծանր իշխանութիւն են ստանում մեր կեանքում: Եթէ անախտութեամբ չորս բոլորը շրջահայե՛ք և տեսնե՛ք, թէ ձանձրութիւնը քանի դռներից աներևոյթ կերպով ներս է սողոսկում մեր կենաց մէջ և շիտթութիւններ է ձգում: Թէ քանի անգամ մենք ինքներս կամ ուրիշները և կամ ինքը կեանքը մեզ ձանձրութիւն են պատճառում: հապա կիսատովաններ, որ մենք ստեղծուել ենք, ահա թէ հէնց միայն բաւական չափով ձանձրանալու համար:

Ձանձրութիւնը արդէն մանկութիւնից արմատ է ձգում: Ծիծ ուսող երեխան իւր լացով յայտնում է ոչ միայն մարմնական ցաւ կամ քաղցածութիւն կամ ուրիշ տհաճութիւն, այլ շատ վաղ հասկացնում է, թէ իւր զիրքի ու կեցուածքի առժամանակեայ փոփոխութեան է կարօտում: Թէպէտ «օրօրոցը իւր անհուն անսահման տիեզերքն է», բայց և այնպէս արդէն նա էլ սկսում է պահանջել, որ օրը փոխուի, նոր հանգամանքների մէջ դրուի, զոր օր, մօր կամ դայիկի ձեռքով խտտուի: Մենք շատ անգամ զուրիսներս կոտորում ենք, թէ արգեօք ինչով դադարեցնենք երկու տարեկանի ծիւլը, բայց կասկած չկայ, որ շատ անգամ ինդժը ձանձրանում է: Նոյն իսկ աւելի հասակաւոր մանուկների ուրախ խաղերի մէջ՝ յանկարծ մտնում է չար դեւը, և խաղի համը կորչում է, որ մի նուագ առաջ այնպէս զուարթացնում էր ամէնին: Ապա քանի անգամ տարակուսուած է մնում նոյն իսկ խելացի մայրը, երբ որ կշտի սենեակից անօղնականի ձայն է լսում: «Մայրիկ, հիմա ի՛նչ անեմ»:

Այնուհետև գալիս է գպրոցը, որ առժամանակ աշակերտի աշխոյժը պահում է նոր նոր տալանտութիւններով: Բայց յետոյ, երբ որ ուսուցիչը կարծում է, որ իւր մատուցածը կենդանի հաց է և ոչ թէ քար, որ իւր ճաշակին և զգացման նայելով՝ աւանդած ուսումը միշտ հաճելի և ցանկալի կերպով փոփոխական է, և ուրեմն անշուշտ հետաքրքրական, հասկանալի, արժանաւոր պիտի լինի, — ահա այդ ուսումն իսկ աշակերտի քիմիքին չի յարմարում: աշակերտը միայն բացառական գէպքերում և կողմնակի կերպով այդ բանը զրօսալի է գտնում, ոյն ևս առաւելապէս այն պարագայում, որով ուսումնաւորանը չի կամենայ պարծենալ, այսինքն երբ որ առիթ է ծագում ամէն կարգի տղայական շարութիւններ անելու և ընկերական քաջագործութիւններով սիրանալու, իսկ մնացած դէպքերում՝ նա աւելի հառաչում է, որ ծանրութիւններից ճընշուած՝ քաղցր օր չի տեսնում: Այսպիսի կեանք

պատրաստելու համար ուսումնարանը հարկաւ առաջին և մեծագոյն նպաստ է տալիս: Բայց ուրիշ կողմից օժանդակութիւնները նոյնպէս անպակաս են լինում: Ձոր օր: աղջիկները բացի զպրոցական ուսումից՝ առնին ուսում ևս ստանում են: այն է սովորական ձեռագործութիւնը: իսկ գուլպայ գործելու դասը՝ հաղիւ թէ սրանեղութիւնը աւելի կարճեցնէ: քան երկար երեսներէ խաղողիլը կամ բաղմաթիւ խնդիրներէ լուծումը: Նոյնպէս ևս զինուորական ծառայութիւնը երիտասարդներին այդպիսի առիթներ շատ է տալիս: ինչպէս օրինակ զերեկ կամ զիշեր ժամանակի մենակ պահակութիւնը: երկար ու անվերջ մարզողութիւնը: վասն մեղաց բանտարկելութիւնը և այլն: Համալսարանն էլ զերծ չէ այս պատահասից: ոչ միայն հետմէական իրաւարանութեան: տրամաբանութեան: յունաց ողորդութեան դասախօսութիւնը անտանելի կարող է լինել—որից աղատուիլը հարկաւ աւելի դիւրին է: քան զինուորական զիշերապահութիւնից կամ հրահանգութիւնից:—այլ այս հասակի երիտասարդութիւնը չի իմանում: թէ իւր ժամանակը ինչպէս գործածէ: նա իւր պարագ ժամերից: մեծ մասը: երբ որ աշխատել չի ուզում: այնպէս անհամ ու տաղտուկ կերպով է վատնում: որ չի էլ զգում: թէ իրօք ձանձրալի կեանք է վարում: որովհետեւ ձանձրութեան ծանկերի մէջ բռնուելով: արդէն անփոփոխելի և սովորական է դարձել այդպիսի կեանքը իւր համար:

Նոյն հասակի կանանց աշխարհումն էլ ձանձրութիւնը չի պակասում: որովհետեւ նոքա ոչ միշտ առիթ ունին զուարճանալու և ոչ էլ միշտ կարողանում են առիթը միամտութեամբ վայելել հէնց այն ծաղիկ հասակում: երբ որ լուրջ պարտականութիւնների ներքոյ տակաւին չեն ծնշվում: երբ որ իրանց անհոգ կեանքի բախտաւորութիւնը շարվում է մեծ ու փոքր զուարճութիւններից:

Բարձր կարգի հասարակութիւնն արդէն ինքն իրան ձանձրութիւններ է պատճառում: շատ զանազան ձանապարհներով: Նա մինչև անգամ փառաւոր հասարակութեան դրոշմը կորցնելու վտանգի մէջ կը համարէր իրան՝ եթէ ձանձրութիւնից խտուի և խպառ հրաժարուէր: քնդուռուած ձևերի պահպանութիւնը: սովորական քաղաքաբարական արարողութիւնների կատարումը: ինչ խօսել և ինչ լռելու գիտութիւնը: կենդանութեան սաստիկ արտայայտութիւնների մեղմացումը: ամէն տեսակ անհատականութեան նշանի թաղուցումը: հաւասարուելու պատրաստակամութիւնը: այս ամէնը կատարվում է միշտ մի և նոյն վտանգի երկիւղով: ուստի և ամենայն ցնկերական ուրախութեան մէջ ձանձրութիւնը այնպէս է հիւսվում: որ շատ անգամ հիւսուածքի զխաւոր մասն է կաղմում: և ոչ որ չի համարձակվում բողբոջել կամ ըմբոստա-

նալ անոր դէմ: Այս տեղ ձանձրութեան խորհուրդը հէնց այն է: որ խափանուի ամէն տեսակ կրքի: շախաղանցութեան: կոշտութեան: քնդհարման արտայայտութիւնը: և իրօք ևս հասնում է իւր նպատակին: թէպէտ և կեանքի ու ճշմարտութեան զոհարեցութիւններով:

Զրօսանքից լուրջ կեանքին դառնալով: մարդկային ոչ մի պարագմունք կամ արուեստ զերծ չենք գտնում հառաչանքներից: ամէնքը շատ ու քիչ պէտք է աշխատութիւն թափեն: բայց ոչ որ իւր աշխատութեան շափ զոհացում չի վայելում վիճակից: Նոյն իսկ մեծամեծները՝ իրանց մեծագործութիւնները կատարելուց առաջ և մէջ ընդ մէջ՝ զբաղվում են մանր և տաղտուկ բաներով: նոյն իսկ հոգեւոր պարագմունքներում: զոր օր: ուսումնական հետաքոտութիւններում՝ պահանջվում է տաժանելի մանր: երկարածիւղ և միօրինակ նախապատրաստութիւն: նոյն իսկ արհեստագէտը իւր ստեղծագործութիւնից միշտ կատարեալ զոհութիւն չի զգում:—անզրկագործը նախ պէտք է համբերութեամբ քարը կտփէ: երգիչը նախ վարժութիւններ անէ: գերասանը նախ անգիր սովորէ: մատենագիրը երկար ձեռագիրները արտադրէ և անվերջ սրբագրութիւնները բարակ բարակ քաղէ: բանաստեղծը օրուայ մեծ մասը Պարսափց իշնէ և մեղ պէս ձանձրութիւնների լուծը քաշէ:—Իսկ ի՞նչ ասենք աւելի ստորին կարգի մեքենական: միակերպ: պարտասեցնող: օրական ապրուստի պարագմունքների մասին: ուր որ ամէնքը ձգտում են շատ վարձ վաստակել քիչ աշխատութեան վաստակով: բայց ամէնքը սովորվում են աւելի աշխատել: քան ոյժերի թափմանը ներում է:

Սակայն կենսական վիճակի տքնութեան հետ ուրիշ կարգի լուծեր էլ կան: որոնք նոյնպէս նպաստում են ձանձրութեան աճելուն: Պարագմունքի շարունակ կապանքին աւելի մօտ է ամուսնական լուծը: Ամենայն մարդ քաջ գիտէ: որ ամուսնական կեանքը այն ովկիանոսն է: ուր որ այնչափ երիտասարդ սրտեր երջանկութեան քիւրաւոր առաքանտներով ջուրն են մխլում: որպէս զի գէթ չափաւոր զոհունակութեան համեստ մակոյկով հաղիւհաղ նուահանգստին հասնին: Եւ ամուսնութեան հիւսվածութիւնը ոչ յանկարծական է լինում և ոչ զաղտագողի է սպրդում: այլ որքան որ սերտ կենսակցութիւնը կենդանաշունչ կարող է լինել: այնքան էլ դժբախտաբար շատ անգամ՝ կեանքը ջլատող է դառնում: այնպէս որ մենք կարող էինք յայտնի առածին—թէ «կիսուած ուրախութիւնից՝ ուրախութիւնը կրկնապատկւում է: իսկ կիսուած ցաւից՝ ցաւի կէսն է մնում»—այս էլ դառնութեամբ կցորդել: թէ «կիսուած ձանձրութիւնից՝ ձանձրութիւնը քառապատկւում է»: Այս: ինչպէս որ երկու հայելիք իրանց մէջ կեցած կերպարների պատկերը

անձայր բազմապատկուած իրար վերադարձնում են, գրեթէ միևնույն կերպով ձանձրութիւնը կարող է փոխադարձ ներգործութեամբ անտանելի չափով սաստկանալ, Կամ միթէ չափազանցութիւն է աւտանելի՝ կոչելլո՞ւ ևս պաշտօնականութիւնը յաճախակի չենք կոչում մահացու, իսկ ուրիշ ինչ գաղափարներ մահացու են կոչում փոխարենարար, եթէ ոչ ատելութիւնը, կամ վիրաւորանքը և կամ սրտի խոցը, Երաւ է, ձանձրութիւնը մարդուն չի սպանում ֆիզիքայէս, բայց զգացում է որպէս մահ, որպէս իսկական կենաց բարձունք, և հէնց այն պատճառով մահացու է դառնում, որ թէպէտ ի սպանում, սակայն կարծես թէ տարտամ ծփանքի մէջ կան է թողնում մեզ, և մենք չենք կարողանում իմանալ—արդեօք ապրում ենք, թէ մեռած ենք:

Ձանձրութիւնը հազար ու մէկ ծանապարհներ է դառնում մեր կեանքի մէջ թափանցելու համար, որովհետեւ մեր մշտական ուղեկիցն է ամենուրեք, վերջ ի վերջոյ դարձեալ միշտ գտնուում է մեզ և մեր ուրախութիւններում իսկ հանդէս է գալիս շար զևի պէս և դառնացնում է մեր կեանքի քաղցրութիւն Ներք, երբեմն մասամբ, իսկ երբեմն լիովին: Ո՞ր տօնախմբութիւնը առանց պահանքների է վերջանում և փոխանակ մեզ վսեմացնելու և մեր սիրտը բաց անելու՝ քանի՞ անգամ դժկամակութեան և դատարկութեան զգացում է դարձնում, որքան ճառախօսութիւնների, տօնախմբութիւնների կամ քարոզների այդպիսի ներգործութիւն են ունենում: Ո՞վ չգիտէ, թէ ինչ ենշանակում ժամերով սպասել նախասենեակում, այն ևս մեծազօր նախարարի կամ բազմազարդ առաջնորդի և կամ ուրիշ անձինքանախանակում: Մեր դրօսանաց ծանապարհորդութիւններն անգամ առանց սե ստուերներիով ծածկուելու չեն մնում, գնացքը ուշանում է, կայաբանները անձայր իրար յաջորդում են, հիւրանոցում երեկոները սպանելու չափ ձգձգվում են, սեղանակիցներից ոմանք մունջ են, ոմանք՝ լուրջ, ոմանք՝ անհետաքրքրական, ոմանք՝ աւելի քան շատախօս, ոմանք՝ ձանձրացնող, որ աւելի անտանելի են, քան առաջինները, երբեմն տեսարանը ծածկվում է մըշուշով, երբեմն անձրևի անվերջ թացութիւնից ուրախութիւն էլ ստաչում է, սկսվում է ամառանոցի կեանքը, և առաջին օրուայ լճի փիի դրօսանքը 28 օրից յետոյ ծիչդ մի և նոյն կերպով է կրկնվում, երեկուայ զուարճախօսը այսօր անհամարում է, մի երկու օր նորան պատահելուց յետոյ արդէն աչքի են ընկնում նորա բոլոր իսկական և երեւակայական պահասութիւնները և նա մեզ էլ չի հետաքրքրում:

Ապա կեանքն ունինաւ ուրիշ միջոցներ ու առիթներ մեզ թթու զգացմունքների ծաշակել տալու համար: Առողջ մարդը յանկարծ օտը կոտրում է

և վեց կամ ութ շաբաթ պտակած պիտի մնայ, ուսումնականը աչքացու է ստանում և պարտաւորվում է օրեր ու շաբաթներ մութ սենեակում նստած մնալ, ներազերով պարտասուածը պտուէր է ստանում երկար ժամանակ թողնել մտաւոր զբոսանքներ և մի տեսակ բուսական կեանք վարել, վերջապէս յիշենք ծերացածներին, որոնք այլ ևս դժ չունին մնացած օրերը այնպէս յիարուռն կերպով վայելելու, ինչպէս որ առաջներն էր, և որոնք այլ ևս չեն կարող կեանքի գառը կամ քաղցր, բայց միշտ կենսատու առատ ջրերից խմել: Դատ անգամ կատակով հաշուել են, թէ քանի տարի է տեւում մեր կեանքը, որքան տարի արթուն ենք մնում և որքան քնած, հիմա կարող ենք աւելացնել, թէ որքան տարի ենք ապրում և որքան ձանձրանում: Սակայն թողնենք այս վհատեցուցիչ խորհրդածութիւնը:

Մենք պէտք է հոշտուինք այն հանգամանքի հետ, թէ ձանձրութիւնը մարդկային կանոնաւոր կենաց մի անբաժան մասն է բնական պայմանն է միշտ այնպէս, ինչպէս հոգու համար մարմինը, արևի համար ստուերը, եղանակի համար անձրևը, երաժշտական դաշնակութեան համար հանգիստները, լեռների համար ձորերը, աղամանդի համար ընդելուզումը, և թէ կեանքի քաղցրութիւնը չէինք զգայ, եթէ դառնութիւնների չպատահէինք: Բայց մարդկանց մեծ մասի տրտունջը այդ չէ, փոփոխութիւնը և ընդհատութիւնը տանելի է, իսկ անտանելի է չափից աւելի ծայրայեղութիւնը, հանգիստները այնքան են ձգձգվում, որ երբը կորչում է, ձորերը անվերջ անապատների ընդարձակութիւն են ստանում, արեգակը երկար ժամանակ չի երևում, և անձրևը էլ չի ուղում գագարել:

Եթէ լաւ քնենք, ձանձրութիւնը հէնց այն պատճառով այնչափ ընդարձակուած է, որ մենք ոյդ տարտամ բառով խիստ շատ բան ունինք նշանակելու, քան կարծում ենք: Ձանձրանալիս ժամանակը մեզ երկարացած է թուում, կարծես թէ տեղութիւնը ձգվում, ուռչում, ստուարանում է, բայց այնքան դատարկութեամբ, որ մենք անիծելով անիծում ենք, որ չքօւի, ոչնչանայ և մեզնից հեռանայ, Սակայն այս դատարկութեան մէջ ուրիշ բաներ էլ խառնվում են, Երբեմն լոկ միայն մարմնական կամ հոգեկան յոգնածութիւնը անընդունակ է դարձնում մեզ մի որ և է բան սկսելու կամ զուարճութեան մասնակցելու, Ուրիշ անգամ այնքան կշտացած ենք լինում գրգռներից, որ մեր հոգու մէջ էլ տեղ չի գտնվում նոր զըրգիչների համար, մի երկու կատակ լսելը տանելի բան է, բայց մի ամբողջ հատոր սրամտութիւններ շարունակ կարգալը այնքան անտանելի է, ինչքան և մի չոր ու ցամաք գրքի ընթերցումը, Դատ անգամ արտաքուստ բռնադատուելու ծնշումը, անա-

զատութեան զգացումը մասն ու բաժին ունի ձանձրութեան մէջ. այս վիճակի մէջ է ոչ միայն աշակերտը, որ պէտք է ուրիշի ամբարից ստանայ փութանակ իւր ամբարից տալու: պէտք է լուռ նստէ, փոխանակ աղմուկ հանելու: պէտք է օտարի մշտքերին հետեւէ: փոխանակ իրանք արձակ թողնելու: պէտք է հեղ մնայ: փոխանակ ստահակ լինելու: — այլ այսպէս է նաև այն մարդու վիճակը, որ մի ձանձրացուցիչ խօսակցի ձանկն է ընկնում: որից ազատուելու հնար չի ունենում: և որի բարքն ու խօսակցութիւնը բոլորէ առ բոլորէ աւելի անտանելի են դառնում: Իսկ երբեմն առաւելապէս մարդու ինքնատիպ անհատական զգայնութիւնն է, որ չի կարողանում տանել և չի ուզում տեսնել օտարի որ և իցէ անսովոր առանձնայատկութիւնը, կամ իւր բնութեամբ և կրթութեամբ այնքան անհամբեր, անհաստատ և անյարատե է, որ չի կարողանում կամ չի հաճում իւր միտքը մի առարկային երկար ժամանակ նուիրել: Ապա պատճառը մարդու չհասկացկղութիւնը կարող է լինել և այսպիսի անընդունակութիւնից ծագող դժկամակութեան զգացումը: զոր օր. դասական երաժշտութիւն, կամ վերացական ծառ, կամ բարձր և անմառչելի նիւթերի մասին խօսակցութիւններ լսելիս: Երբեմն ևս վճռի անյայտութիւնը, յուսոյ և երկիւղի մէջ տատանումը ծածկուած է լինում մեր ձանձրութեան տակը: ոչ միայն երբ մի առամնարութի կամ նախարարի նախասննակումն ենք, այլ և ուրիշ տեղերում: Այդ վիճակը մի անձկութիւն է, որ զգայարանքների գոնքը փակում է կենդանարար տպաւորութիւնների հանդեպ և ժամանակը երկարացնում է հոգին հանելու չափ: կամ մի յուսարեկութիւն, հրաշթափութիւն է, որ սրտի վերայ փոփում է և մեզ աշխարհից կրտրում անջատում է: Ըստ անգամ ևս միշտ մաղձութիւնն է, այն ևս այն տեսակը, որ մաշում է հիւժում, չորացնում է: Արիշ անգամ անտարբեր և չէզոք սպանիչ անզգայնութիւնն է, որի վարձք ու անէծք է դառնում անրութեան ձանձրութիւնը, կամ նաև բնական տափակութիւնն ու գաղափարութիւնն է, որ թափուր և բորիկ է հանդիսանում զգացական և մտաւորական ջերմութեան ուղ ու ծուծից:

Նւ ինչպէս որ մէկի մէջ հոգեւ աղքատութիւնն է ձանձրութեան պատճառ, ուրիշի մէջ՝ հարստութիւնն է, այսինքն հոգեւոր կենաց հարբստութիւնը, որ համապատասխան պահանջներ է յայտնում իւր շրջապատող աշխարհքին: որ իւր հայեացքի համեմատ իւր հաւատարմներ է փնտռում և զգոհ է մնում հասարակ շրջանի պարզութիւնից: Բայց հարկաւ կան և այնպիսի հարուստներ, որ երբէք չեն ձանձրանում: որովհետև միշտ կարողանում են և յօժար են իրանց հարստութիւնից մասն ու բաժին հանել ուրիշներին և նոյն իսկ իրանց անձին ևս շահ

տալ: կան և այնպիսի աղքատներ, որ նոյնպէս չեն զգում ձանձրութիւն: որովհետև փոքրագոյն զրգիշներին ևս զգաստ և զոհ են մնում: որովհետև հոգեով սակաւապետ են: Ահա այսքան բազմազանութիւններ ակնարկելուց յետոյ, որ սովորութիւն ունենք մի ձանձրութիւն: անունով նշանակել ամէնը, այժմ՝ յիշատակներ մի քանի մանրամասնութիւններ:

Զոր օր. ձանձրութեան գերը խիստ տարբեր է զանազան հասակներում: զանազան ազգերի և քաղաքակրթութեան զանազան աստիճանների մէջ: Ձանձրութիւնը ամէնից աւելի չի սաղում մանկութեան, որի համար աշխարհքը լի է հրաշալիքներով: իսկ եթէ նա սկսում է ձանձրանալ, այդ նշան է, որ սկսել է յոգնել բոլորական յեղիւղուկ տպաւորութիւններից, և ուրեմն ժամանակ է որ կանոնաւոր հրահանգի մէջ զրուի և կապակցած ուսմամբ իր առաջ նոր աշխարհների գոնքը բացուին: Բայց ուսումնարանումն էլ ուրիշ տեսակ ձանձրութիւն է տիրում. այն տեղ պէտք է ուշադրութիւնը լարել: խիստ կանոնների տակ հոգեկան զգաստութիւն պահպանել, շարժուելու բնական ձգտումը խափանել և միշտ երազել, թէ արդեօք երբ է զաւուկիրակին կամ տօն օրը: Վաղ այդ մանուկներին, եթէ տան էլ ձանձրանում են: Դոքա ոչ բախտաւոր կը լինին և ոչ յարգութիւն կը վայելեն: երբ որ մեծանան: Մասամբ ծնողներն են մեղաւոր, որ փոքրերը ձանձրանում են: Իրանք յափառած գոլով, ձանձրանալու օրինակ և օժիտ են տալիս զաւակներին: ապա պահանջում են նոցանից չափից աւելի բարեկրթութիւն, մանրակրկիտ ձուլումն ըստ ամենայնի իրանց պաշտած գաղափարի համեմատ: մանկական աշխարհքը կաշկանդում են հասակաւորների քաղաքավարութիւններով, ձևերով և զուարճութիւններով, խլում են նոցանից դալարութիւնն ու թարմութիւնը, իսկ կորցրած թարմութիւնը նոյն է թէ ձանձրութիւն: Պատանեկութեան սկիզբը արրուքի տաքնապալից շրջան ունի: այդ՝ եթէ ներքին է ասել՝ զփութեան տարիքն է, Երկու սեռի գժութիւնները այլ և այլ կերպով են արտայայտվում: միայն այն ընդհանուր նշանով, որ մեծ մասով ձանձրութեան արդիւնք են լինում: Խեղէտ այդ հասակում կատակ, ծիծաղ, ցնորք, նոյն իսկ խելացի սխրագործութիւն չեն պակասում: Բայց այդ հասակի դրոշմն առաւելապէս դառնում է գատարկութիւն: ունայնութիւն: ներքին ուրախութեան և կատարեալ դուգակչութեան պակասութիւն: Այս այն շրջանն է, երբ որ անցեալը լուծվում է և մի նոր բան է պատրաստվում: Էարկաւ այնպէս բախտաւորներ էլ կան, որոնք այդ միջոցներում երբէք չեն կորցնում իրանց բարեհամայր շնորհքը և սրտի խաղաղ կենդանութիւնը: դոքա են երիտասարդութեան ազնուագոյն ծաղիկները:

Բայց անտարակոյս ձանձրութիւնը աւելի վերադասուած է հասուն տարիքներէ համար: Միմէ դոժերի մաշուիլը, հոգեկան թարշամութիւնը, արպաւորութիւնը և զրդիս ստանալու անընդունակութիւնը, սրտի անյուսութիւնը, յոյզերի նսեմանալը, կամքի ջլատութիւնը—միմէ այս ամէնը վերջնական և անձողոսարիւի ձանձրութեան հիմունք չի՝ կադմում: Բայց և այնպէս ծերերից շատերը հակառակն են հաստատում: Ուր որ ազնիւ հոգեով է ծնունել և աղնիւ միծակ է ունեցել, նա ի ներքուստ հարուստ է լինում իւր բարեարտութեամբ դէպի շրջապատողները, իւր պայծառ հայեացքով և անխոյզ յիշողութիւններով: Իրաւ է, նա իւր զօրութիւնները կորցնելով՝ հիմա կարողանում է բաւականաւալ աւելի չափաւոր բարիքներով, աւելի քիչ վստակներով և աւելի համեստ վայելչութիւններով: Զոր օր, պառու կինը ամենևին չի ձանձրանում շարունակ միմանց յետևից գուլպաներ գործելուց, մինչդեռ փոքր աղջկայ ծակատը կնճիռներով կը ծածկուի: Եթէ գուլպայի միւր մի երկու կարգ շրջան առնեն, այսպէս էլ միշտ մի և նոյն 2 կանգուն գաւթի մէջ զրօնները, ամենայն օր մի և նոյն մարդկանց ընկերակցութեամբ միշտ նոյն տեղում անց ու դարձ անելը և ըրիւր անգամ մի և նոյն մտքերի փոխանակութիւնը, այս և շատ այսպիսի բաներից ծերը այլ ևս չի ձանձրանում: մինչդեռ երիտասարդը ստրկի տաժանական գործ կը համարէր այդպիսի կեանքը:

Եզգերն էլ տարբեր տարբեր կերպով են զգում ձանձրութիւնը: գոթա նման պահանջներ չունին: Թէ արդեօք իրանց ժամանակը ինչով զարգարուի, ինչ տպաւորութիւններով փոփոխուի, իրանց յոյզերը ինչ չափով շարժուին և առհասարակ իրանք ինչ զրգիռներով սնանուին և ինչով կենդանանան, Հնդկական ֆալիքը, սիւնակեաց քրիստոնեան և առհասարակ արեւելքին բնաւ չի նմանում բոսնականներին և գերմանացիներին: այդպէս էլ Եւրոպայի հիւսիսականները տարբեր են հարաւայիններից: Եզգերից ոմանք աւելի հանգիստ և հանդարտ բնութիւն ունին: ուստի և ուրիշներին ձանձրալի և ձանձրացող են թուում: միւսներն աւելի աշխոյժ են: րայց աւելի ևս անհամբեր են: արդ, որ կողմն է ձանձրութիւնը, Ենգլիացիները ծանապարհորդելիս ուրիշներին թուում են խղճալի կամ անհասկանալի, որովհետեւ նոքա մեծ մեծ տարածութիւններ անցնում են ոչ մի մարդու հետ չխօսելով կամ ոչ դիմ չընկերանալով: շրջապատող տպաւորութիւններից գրեթէ չաղդուելով: և ամէնքը կարծում են: Թէ դոքա ձանձրանում են: մանաւանդ երբ որ այն էլ են յիշում, Թէ դոքա իւրեանց կիրակին ինչպէս են տօնում: Եյսպէս էլ միւս եւրոպացիների համար անհասկանալի է, Թէ ինչպէս գերմանացի կարողանում են երեկոները՝ հոտած ենեակում նստած՝ ժամերով դարեմուր խմել:

քիչ կամ կցկտուր խօսակցութիւնը բաւ համարելով և արուցումից ոչ մի զգալի արդիւնք չլատակելով: Եթէ այդ մարդիկ չեն ձանձրանում—արդեօք այն պատճառով է որ իրստ բլամիտ են: Թէ խիստ հարուստ են հոգեով և ուրեմն սովորել են արտաքին ձանձրութիւնը առ ոչինչ դնելու:

Աւելի հասկանալի են քաղաքակրթութեան աստիճանների զանազանութիւնները: Մարդ որքան որ աւելի բնութեան մօտիկ լինի և քաղաքակրթութեան նրբութիւններից հեռու, կործես Թէ այնքան աւելի պակաս ձանձրութիւն է զգում և իմանում: Աւելի միակերպ և հասարակացած կեանք վարելով՝ գիւղացին այնքան էլ չի գանգատուած ձանձրութեան մասին: նորանից արտունջ կը լսէք կեանքի ծանրութեան աշխատանքի շարաշարութեան արդիւնքի սակաւութեան: անօգուտ վատտակի մասին: րայց ոչ Թէ ձանձրութեան մասին: Եւ եթէ այդ մարդիկ կիրակի օրը տան առաջ փողոցում նստում են երկար ժամեր: այն ևս լուր կամ գրեթէ անխօս պշտած հեռու նայելով: այնու ամենայնիւ գոթա բնաւ չեն ձանձրանում: և ոչ նոյն իսկ ձմեռուայ լուր օրերին: երբ որ իրանց աշխատութիւնները դադարած են լինում: իսկ իրանց ժամանակ անցկացնելու եղանակը՝ ճիշդ կենդանիների ձմեռային քուն է դառնում: Պատճառը անշուշտ չի կրող լինել իրանց ներքին կենաց հարստութիւնը: այլ աւելի պիտի լինի նախ սրտի հանդարտութիւնը: ապա իրանց հոգեկան ձգտումների պարզութիւնը և աւելի ևս իրանց իրական յոգնութիւնը: որ իրօք հանգիստ է պահանջում: Լուրջ աշխատութիւնից եկած յոգնութիւնը լաւ միջոց է ձանձրութեան դէմ: Իսկ յոգնութեան պակասութիւնը՝ պատուական հոգ է տաղտկութիւն գոյացնելու համար: Բայց այդ գիւղացիք ևս լիովին կը ձանձրանան: Եթէ լսեն սիմֆոնի-համերգ կամ մի երկար ուսումնական ճառ: մինչդեռ իրանց քահանայի քարոզը: նոյն իսկ երկարն ու խրթիւնը: անտրտունջ (րայց հարկաւ առանց խոր աղդուելու ևս) համիւրութեամբ կը տանեն: իրր մի չափաւոր անձրեւի շաղ:

Եւ առհասարակ սովորականը, կենցաղավարութեան ընդելութիւնը՝ ձանձրութիւն չի ծնանում: պայպիսի պայմաններում տան անդամները այնպէս են ապրում: իրար հետ: որ իւրաքանչիւրն իւր գործը անվճար կատարելով, չի ձանձրանում: մանաւանդ հէնց այն պատճառով, որ ոչ ոք միւսներից զուարճութիւններ չի էլ անկալում: Իսկ եթէ մի մեծ փոփոխութեան մի սքանչելի շրջադարձութեան մի ցանկալի այցելութեան յոյս լինի, և այն յանկարծ խափանուի, միայն այդ դէպքում սովորականը կզգացուի իրր ձանձրալի:—Մեր ընտանի կենդանիներն էլ մի և նոյնն են հաստատում: Թայտի է, Թէ շուրջ որքան է ուրախանում: հէնց

որ լսում է անորձ ծայրը՝ որ նշան է նորահետպտոյս անել դնալու, կամ թէ ձիերը ինչպէս են աշխուժանում, երբ տեսնում են, որ սայլը բակից քաշում են փողոցը՝ բայց ինչպէս ձանձրանում է գեղձանիկը, որ յախտան րոնադառառած է նեղ վանդակի մէջ երկու ձողիկների վերայ վեր ու փայր թռչելու, կամ ազնիւ ձին, որ ստիպուած է քսան երեք ժամ անոտի մէջ մնալ, միշտ զլուխը մնուրի պատին դարձրած, փոխանակ կանաչ դաշտում ազատութիւն վայելելու: Վաղուած կաշկանդուած «քնտանի կենդանիները» մեզինք շատ նեղութիւններ են կրում, դաշտում և անտառում թերեւ նոքա քաղցած մնան, մրսեն և զազաններից պատառոտուելու վտանգի մէջ լինին, այլ անշուշտ հազիւ թէ երբ և իցէ ձանձրանան:

Բայց առ հասարակ զգալի է, որ յառաջագիմոյ քաղաքակրթութիւնը սկսում է հետզհետէ ձանձրութիւնը կարճեցնել, անդադար հնարվում են այնպիսի գիւտեր, որ փոխանակ երկար ու քարակ քաշքշելու՝ գործը յաջողեցնում են մի փայրկեանի մէջ. ամբողջ աշխարհքի խորհուրդներն ու զաղանքները աւելի և աւելի րացվում և յայտնի են դառնում իւրաքանչիւր մահկանացուի գիտակցութեան. զրօսանքները հանրութեան մատչելի կացուցանելու միջոցները՝ միշտ րազմապատկւում են և այլն, Յաւը միայն այն է, որ ամէն մի գոհացուցած գրգիռը՝ նորանոր գրգռումների բղձեր է գոյացնում, պահանջները աճում են, անհամբերութիւնն էլ զօրանում է, Եսկապէս առնելով ձանձրութիւնը այն ստուերն է, որ ամեն մի դուարձութիւն իւր հետեից սև գծի պէս թողնում է. մեր ժամանակը շատ առաջ է գնացել այն ուղղութեամբ, որ այլ ևս անհնարին է համարվում գոհանալ պարզ և հանդիստ կենցաղավարութիւնից և այդպէս երջանիկ լինել, Հիմա ամէնը ուղում են միշտ նորութիւններ, միշտ արագ փոփոխութիւններ, ուղում են կարգայ միայն բորբոքիչ գրուածքներ, ուղում են յսել միայն յուզիչ գայթակղութիւններ, և այսօր աշխարհքի ամէն ծայրերից եկած նշանաւոր տեղեկութիւններն էլ այնպէս տպաւորութիւն չեն գործում, ինչպէս որ մի երկու տասնեակ տարի առաջ սղղում էին չրջակայ գիւղերի լուրերը հասարակ կղելութիւնների մասին: Հիմա էլ ովէհարցնում, թէ «ինչ նորութիւն կայ» որովհետեւ նախ նորութիւնը ինչնին իսկոյն տարածվում և ամէնի ախանջին հասնում է, և երկրորդ հալը թէ այնպիսի նորութիւն գտնուի, որ կարողանայ սաստիկ ներգործել, Ընցան այն ժամանակները, երբ որ մարդիկ դուարձութեամբ լսում էին երկար ու ձիգ դիւցազնագործութիւնները, էլ մեր մանուկները առանց ձանձրանալու չեն լսում, մի հէքիաթ նոյն բառերով կրկնում. հիմա ֆրանսիական հասարակութիւնը անորձակ չուին, առաջուայ պէս

բերկրութեամբ լսելու նախկին դասական ողբերգակաների շնչապառ մենախօսութիւնները, Ըհա մի քանի տասնեակ տարի է, որ անգագար հնարվում են աւելի լոյս տուող ծրագներ, ամէն անգամ մարդիկ լնդում են, թէ որ չափով նորը հնից աւելի պատուական է իւր «ցերեկուայ պէս լուսով», րայց աչքի համար այդնորն էլ սովորութիւն է դառնում, տեսութիւնը այդ դէպքումն էլ կոշտանում է, և մարդիկ առաջուայ պէս կրկին տրտնջում են, թէ ծրագի լոյսը խաւար է, անգեկան գրգիռներն էլ այնպէս են, որ վերջիվերջոյ նոյնպէս կոշտացնում են և ձանձրութեան դուռն են րաց անում:

Ուրեմն ձանձրութիւնը աշխարհից փնտել անկարելի է, իսպառ ունչացնել կամ նսեմացնել այնպէս դժուար է, ինչպէս որ մթութիւնը կամ աղօտութիւնը չի կարող ամէն խուց ու պոռնիսից փարատուիլ, Ձանձրութիւնը տեղ է դանում ոչ միայն ամէն տնտեսմութիւններում, ոչ միայն երիտասարդութեան երջանիկ հասակում, այլ և անկախագոյն, ազատագոյն մեծամեծների վիճակում, — Ըյս հերիք չէ, այլ ձանձրութիւնը որպէս իրօք բժշկական միջոց է գործ դրվում, որովհետեւ բժիշկը շատ անգամ պատուիրում է հիւանդին, որ սրտի յուզումներից խոյս տայ, որ այնքան դժուար է կատարել, ինչքան եթէ կողը ճգնէր չկաղայ, Ըյս դէպքում մեր քաղաքակրթմ մարդը պէտք է առանձնանայ գիւղի մէջ և վարժուի լսել կովի բառաչը կամ արագաղի կանչը և գոհանալ շինական կիանքի անպաճոյճ գիղեցկութիւններով: Տ ինչ տանջանք է նորս համար, երբ որ երեկոյեան ամայութեան ժամանակ հառաչելով մտարեում է նուագահանդէսը, թատրոնը կամ րնկերական դուարձութիւնները, ո՛հ ինչ ազահութեամբ կը լսէր այս առանձնութեան մէջ քաղաքի աստիօսէրը և գրախօսութիւնը, այս տեղ էլ կուզէր նա յուզուել, մրցել, զօրութեան ոյժը փորձել, անախտութեան պատիւներ քաղել, թէպէտ և այս բոլորը ի վնաս առողջութեան:

Ձարմանալի է, ուր որ հարկ է փորը ինչ ձանձրութիւն կրել, մենք ամենայն զօրութեամբ թափ ենք տալիս մեղից պղպիսի առողջապահական միջոցը, իսկ ուր որ ինքներս փախում ենք այդ հրէշի ճիրաններից, պատուհասը մեզինք պոկ չի գալիս: Վամ միթէ կիրակի ու տօն օրերը կառքերով ու երկաթուղիով չենք շտապում դուարձալի զրօսավայրերը, իսկ վերադառնում ենք յոգնած սրտով ու թմրած աչքերով, չդանելով մեր փնտաւոր, որ հետեւեալ տօն օրին դարձեալ պիտի սկսենք մի և նոյն ճանապարհով փնտուել:

Հիմա փոքր ինչ կրթութեան մասին խօսինք: Մեծ մասով կրթութիւնը և այն ի հարկէ սուտ կրթութիւնը՝ դրօշ է ստանում դուարձութեան կարիքը, ուստի և միշտ դատապարտուած է ձանձ-

բութեան դէմ պատերազմելու: Իսկական կրթութիւնը որ սրտի ու մտքի բուն զարգացումն է: որ մի ներքին անկապտելի հարստութիւն է: որ կարօտ չէ միշտ զբոսից իւր ծարն ու զարմանք յուսալու: երբէք բանն այն աստիճանի չի հասցնում որ յիշեալ տառապանքը կեանքի մէջ զիրութեամբ տեղ գտնէ: Ուրեմն անկերպ է: որ կրթութիւնը ձանձրութեան դէմ ստոյգ զօրութիւն պիտի դառնայ: այն ևս անհատի համեմատ կազդուրելով մէկի զգոյարանը: միւսի երեւակոյտութիւնը հասկացողութեան կամքի և կամ սրտի կողմից նայելով թէ ձանձրութիւնը որ դռնից է մուտք գործում: Ով որ աւելի հողիման շահեր ունի աւելի պակաս ձանձրութեան կը հանգիստի իսկ հոգեկան շահը կամ հետաքրքրութիւնը դատարկ է առանց հիմնական խելամոռութեան: առանց հիմնական զարգացման: Եւ դարձեալ այլ է լոկ միայն գիտութիւնների ծարար: որ առանց որոճալու փուշ բաները չափից դուրս և փայրապար բրբրելու տենչ կամ անցողակի նորախրոթիւնն է դառնում: և այլ է խոր արմատացած սէր զիտելու: նկատելու: հետազօտելու: ըմբռնելու համար: որ իւր սնունդն է գտնում ընտելութեան նոյն իսկ ամենափոքրագոյն և աննշանակ իրերի և երեղիքների մէջ:

Երգ նոյն իսկ պատահական: ոչ ի ներքուստ ծագող: այլ արտաքին հանգամանքների նենգութիւնից բննող ձանձրութիւնը—զոր օր: մի կորած տեղի փոքր կայարանում: չորս դատարկ պատին նայելով: չորս ժամ սպասելու տառապանքը—աւելի զիւրաւ կարող է տանել այն մարդը: որի հոգին այնպէս դատարկ չէ: ինչպէս զոր օր: հիւրանոցի վարձու սենեակը կամ սե սե թղթերով պատած ամառի դաշտը: Աւերջապէս պէտք է սովորել անձրից յետոյ այնպէս փայլել արեւի ծագողայթները: ինչպէս որ իմաստուն մայրը երբեմն ուրախացնում է իւր զաւակներին: մի առ ժամանակ նոցա հին ու մին խաղալիկները սնդուկի մէջ փակելով: որպէս զի ապա աւելի մեծ փառքով և խընդութեամբ ողջունել տայ սնդուկի բացումը:

Հիմա մի քանի պարզ կանոններով աշխատելը շատ բան հասկանալ: պէտք է կարողանալ քաջութեամբ և անվհատելի սրտով տանել դէպքը: և թէ հանգամանքները մեղ ձանձրութիւն են վիճակել: պէտք է վարժուիլ անձամբ չկուշել մեր գլխին ձանձրութեան պատուհասը: պէտք է խղճի խայթ դառնայ մեղ համար: թէ մի գուցէ ուրիշին ձանձրութիւն պատճառենք—այսինքն ուրիշին ոչ միայն չգաւացնենք: չզրգոնենք: չխոցենք: չտանջենք: այլ և զուր կերպով չձանձրացնենք նորան: ոչ նորա ընտանի կենդանիներին: ոչ նորա տնորարդերաներին: ոչ նորա զաւակներին: կամ նորա բարեկամներին և կամ հիւրերին: քանի որ մարդու անձնասիրութիւնը ամէն մի դէպքից գայթակղվում է անզգալարաբ

սորան-նորան ձանձրացնելու: թէպէտ պարզ քաղաքավարութեան պատշաճականութիւնն անգամ արգելում է այս բանը: բայց ցանկալի է: որ պատշաճականութիւնը լոկ միայն արտաքին ձևապատութիւն չդառնայ: այլ սպիւս սրտից: յոժարակամ բղետում լինի: և ուրեմն քաղաքավարութիւնը իսկական մարդասիրութեան յատուկ կնիք և արգիւնք հանդիսանայ:

Քանի որ հիւրերի մասին խօսք եղաւ: չպէտք է մոռանալ: որ քարոյ կամ ճառ լսողն ու գիրք կամ թուղթ կարդացողն ևս պէտք է նկատուին որպէս հիւր: և ուրեմն ամենայն ակնածութեամբ նոցա ևս ի դուր ձանձրութիւն չպէտք է պատճառել: Իսկ ձանձրացնելու ամենատոյգ միջոցն այն կը լինի: ինչպէս ֆրանսիական առածն ասում է: Եթէ ճառասուր ուզենայ ամենայն բան ասել: ամենայն ինչ որ նիւթի մասին սրտում հաւաքած ունի կամ ինչ որ գլխից դուրս տալու ընդունակ է: Մարդիկ աւելի ներում են թերակատարութիւնը: քան լայնածաւալ լիակատարութիւնը: աւելի սիրով շտկանելու են դնում դասաւորութեան մի փոքր անյաջողութիւնը: քան իմաստակութիւնների մարգարտի հատիկների պէս մէկիկ մէկիկ շարուածքը: և աւելի ախորժում են կարճ կտրած վերջարանը: քան մի երկարածիգ: շունչը կտրող: մեծ մեծ քարոզ աւարտարանութիւն:

Ս. Մ.



ՀՕՐ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ

Հօր վրայ պատասխանելին և դրանով դատարանելու երկխոսին իւր հեղինակութեամբ: իսկ մայրը պատասխատ է նոյն նպատակին հասնել իւր գրովով ևս լինելութեամբ:

ԺԱՆԵՅ:

Հայր լինելը ծանր պատասխանութիւն է: որի համար ոչ ամենքն ի բնէ կոչումն ունին:

ԱՆԴՐԵԱՍ ԳԱՐԻԲԵԼԻ:

ԳՐԻՅԷ մենք չափից աւելի մեծ նշանակութիւն ենք տալիս այն կարծիքին: թէ մանկան դատարանելութեան և ուսուցման վերաբերեալ հոգսերը միմիայն մօր պարտաւորութիւնն են կազմում: Քանի երեխաները գեռ փոքր են: կապած չկայ: որ այդ հոգսը գլխաւորապէս կնոջ վերայ է ընկնում: Եւ այդ շատ հասկանալի է: քանի որ կինը աւելի շնորհք ունի զորա համար: աւելի նուրբ հա-